ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՄԱՅԻՍ 2026



«Աշխատանքն ու աշխատողի այսօր մարտահրավերներն ու առաջնահերթությունները» խորագրով պանելային քննարկում

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի մայիսմեկյան շնորհավորական ուղերձը

Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիության ուղերձը Եվրոպական գագաթնաժողովի կապակցությամբ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Եվրոպական արհմիությունների կոնֆեդերացիայի համատեղ հայտարարությունը՝ Երևանում անցկացվող Եվրոպական քաղաքական համայնքի Հայաստան–Եվրամիություն գագաթնաժողովի առիթով

Հայաստանի ԲՈՒՀ-երի արհմիությունը՝ Կրթության միջազգային գլոբալ արհմիությունների ֆեդերացիայի անդամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ողջույնի խոսք
- Առավոտ լուսո. Էլեն Մանասերյան
- «Լույս Առավոտի». Տիրուհի նազարեթյան
- Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի մայիսմեկյան շնորհավորական ուղերձը
- «Աշխատանքն ու աշխատողն այսօր մարտահրավերներն ու առաջնահերթությունները» խորագրով պանելային քննարկում
- «Մայիսի 1»-ը փուչիկներով տոնելու օր չէ. Էլեն Մանասերյան
- Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Եվրոպական արհմիությունների կոնֆեդերացիայի համատեղ հայտարարությունը՝ Երևանում անցկացվող Եվրոպական քաղաքական համայնք Հայաստան–Եվրամիություն գագաթնաժողովի առիթով
- Եվրոպայի հանրային ծառայությունների արհմիության ուղերձը Եվրոպական գագաթնաժողովի կապակցությամբ
- Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան հյուրընկալեց Դանիայի արհմիությունների զարգացման գործակալության ներկայացուցիչներին
- Կայացավ հերթական արհմիութենական երիտասարդական ամառային դպրոցը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների Ճյուղային հանրապետական միության Ուղերձը Հանրապետության թանգարանների աշխատողներին՝ Թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ
- Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը հյուրընկալել է Լիտվայի պետական և բյուջետային հիմնարկների ճյուղային արհմիության պատվիրակությանը
- Էլեն Մանասերյանն ընտրվել է ԱլԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի համակարգող
- Քննարկում տնային աշխատանք կատարողների աշխատանքային իրավունքների պաշտպանության առնչվող հարցերի շուրջ
- Հայաստանի ԲՈՒՀ-երի արհմիությունը՝ Կրթության միջազգային գոբալ արհմիությունների ֆեդերացիայի անդամ
- Արհմիությունների դերի ամրապնդումը կոլեկտիվ բողոքարկման ընթացակարգում և աշխատանքի անվտանգության ու առողջության չափանիշների առաջխաղացումը



ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

«Արհմիութենական անցուդարձ» ամսագիրն լուսաբանում և հանրահռչակում է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) կողմից կատարված աշխատանքները: Այս ամսագիրը դարձել է հարթակ, որտեղ ներկայացվում են արհմիութենական առօրյայի կարևոր իրադարձությունները, ծրագրերը և միջոցառումները, որոնք նպաստում են աշխատողների իրազեկմանն ու նրանց աշխատանքային, սոցիալական, տնտեսական և մասնագիտական իրավունքների պաշտպանությանը:

Այսօր, ավելի քան երբևէ, տեղեկացված լինելը կարևոր է, և մենք շարունակում ենք մեր գործն՝ ամրապնդելով արհմիութենական շարժումը Հայաստանում և տարածելով տեղեկատվություն:

ԱՌԱՎՈՏ ԼՈՒՍՈ. ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

https://www.youtube.com/watch?v=Vee-HNHcz7I

«ԼՈՒՅՍ ԱՌԱՎՈՏԻ». ՏԻՐՈՒՀԻ ՆԱՋԱՐԵԹՅԱՆ



https://youtu.be/wRQgvNT6aZI?si=9t60EBvMX6NeBX3i

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ

Սիրելի աշխատողներ, արհմիութենականներ, գործընկերներ,

ջերմորեն շնորհավորում եմ Մայիսի 1-ի՝ Աշխատավորների միջազգային համերաշխության օրվա կապակցությամբ։
Այս օրը խորհրդանշում է աշխատավոր մարդու արժանապատվությունը, համերաշխությունը, իրավունքների պաշտպանության համար մղված պայքարը և սոցիալական արդարության ձգտումը։ Մայիսի 1-ը հիշեցնում է մեզ, որ հասարակության և պետության զարգացման հիմքում կանգնած է մարդը՝ իր աշխատանքով, գիտելիքով, փորձով ու նվիրումով։
Այսօր մենք երախտագիտությամբ շնորհակալություն ենք հայտնում մեր երկրի բոլոր աշխատողներին՝ բժիշկներին, ուսուցիչներին, արդյունաբերության, գյուղատնտեսության, ծառայությունների, տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների և բազմաթիվ այլ ոլորտների ներկայացուցիչներին, որոնց ամենօրյա աշխատանքը շարժում է մեր տնտեսությունը և ապահովում հասարակական կյանքի բնականոն ընթացքը։
Միևնույն ժամանակ, այս օրը նաև առիթ է ևս մեկ անգամ բարձրաձայնելու այն խնդիրների մասին, որոնց առջև կանգնած են աշխատողները Հայաստանում։ Արժանապատիվ աշխատանքի, արդար վարձատրության, անվտանգ աշխատանքային պայմանների, սոցիալական պաշտպանության և աշխատանքային իրավունքների լիարժեք իրացման հարցերը շարունակում են մնալ մեր օրակարգի առաջնագծում։
Մենք համոզված ենք, որ ուժեղ պետություն հնարավոր է միայն այն դեպքում, երբ գնահատված և պաշտպանված է աշխատող մարդը։ Տնտեսական զարգացումը պետք է արտահայտվի ոչ միայն թվերով, այլ մարդկանց կյանքի որակի բարձրացմամբ, կայուն զբաղվածությամբ և վստահությամբ վաղվա օրվա նկատմամբ։
Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան շարունակելու է հետևողականորեն պաշտպանել աշխատողների իրավունքները, զարգացնել սոցիալական երկխոսությունը և նպաստել այնպիսի միջավայրի ձևավորմանը, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կունենա արժանապատիվ աշխատանքի հնարավորություն։
Մաղթում եմ ձեզ խաղաղություն, առողջություն, բարեկեցություն և աշխատանքային նոր հաջողություններ։

Շնորհավոր Մայիսի 1-ը։

«ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ԱՇԽԱՏՈՂՆ ԱՅՍՕՐ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՊԱՆԵԼԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Աշխատանքի օրվա առթիվ մայիսի 1-ին կազմակերպվել է պանելային քննարկում՝ «Աշխատանքն ու աշխատողն այսօր. մարտահրավերներն ու առաջնահերթությունները» խորագրով: Միջոցառման շրջանակում իրականացվել են երկու թեմատիկ քննարկումներ: Առաջին քննարկումն անդրադարձել է աշխատանքի և սոցիալական քաղաքականության օրենսդրական առաջնահերթություններին՝ համախմբելով պետական և մասնավոր հատվածների ներկայացուցիչներին՝ ոլորտի զարգացման հիմնական ուղղությունները քննարկելու նպատակով: Երկրորդ քննարկման առանցքում էին աշխատավայրում աշխատողների առողջության և իրավունքների պաշտպանության հարցերը՝ քաղաքականությունների ձևավորումից մինչև դրանց արդյունավետ կիրարկում և իրական ապահովում:

Քննարկմանը ելույթներով հանդես են եկել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանը, ՀՀ ԱԺ Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը, ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Սլավիկ Սարգսյանը, Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Վահագն Համբարձումյանը, Առողջության ապահովագրության հիմնադրամի գլխավոր տնօրենի ժ/պ Սամվել Խարազյանը, Առողջապահության աշխատողների արհեստակիցական կազմակերպությունների ցյուղային հանրապետական միության նախագահ Շուշան Պետրոսյանը: Միջոցառման նպատակն էր ձևավորել մասնագիտական բաց և կառուցողական երկխոսության հարթակ, բարձրաձայնել ոլորտի առաջնահերթ խնդիրները, քննարկել դրանց լուծման հնարավոր ուղիները և խթանել բազմակողմ համագործակցությունը:

https://www.facebook.com/pagehamk/posts/pfbid02P21stGVs5TosnerDYMjjPGetcpBFjJujysXPPzhfsQZUfmayxLsapczJkm6dUGvzl

https://www.facebook.com/reel/1606335153777307

https://www.facebook.com/pagehamk/posts/pfbid0dLfkxyuqgvrTsCeJ1MndYZHCANgATOiS7BTURRii25tpXgfV6NRAXnDNCK38Eq5jl

https://www.facebook.com/reel/1679523133198737

«ՄԱՅԻՍԻ 1»-Ը ՓՈՒՉԻԿՆԵՐՈՎ ՏՈՆԵԼՈՒ ՕՐ ՉԷ. ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

ORAGIR.NEWS https://oragir.news/hy/material/2026/05/01/193950

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ–ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

Joint Statement
European Trade Union Confederation (ETUC)
and Confederation of Trade Unions of Armenia (CTUA)
on the occasion of the European Political Community Meeting and the EU–Armenia Summit

On the occasion of the European Political Community meeting and the first-ever EU–Armenia Summit in Yerevan, the Confederation of Trade Unions of Armenia and the European Trade Union Confederation welcome the reinforced relationship and high-level contacts between the Republic of Armenia and the European Union.

We highlight the important steps towards a closer cooperation between Armenia and the European Union taken under the Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) and the Strategic Agenda, as well as the EU's long-standing support to Armenia in implementing socio-economic reforms and enhancing resilience.

We reaffirm the commitment of trade unions to European values and to the European social model, including democracy, the rule of law, human dignity, social progress, and the protection of fundamental labour and social rights, as essential pillars of sustainable social and economic development.

Within the CEPA framework, democracy must be further strengthened through the meaningful participation of workers and their trade unions in shaping public policies and socio-economic reforms.

In this context, we call on European and Armenian leaders to ensure that:

- Effective and institutionalized social dialogue between institutions, trade unions and employers' organizations is fully guaranteed and strengthened, as it is essential for democratic governance, sustainable development, and to ensure Armenia's alignment with European social and labour standards;
- The implementation of CEPA and EU-supported reforms promotes quality jobs and social progress and fully respects labour rights, including the right to organize, collective bargaining, and the right to strike, in line with international and European standards;
- The protection of trade unions and their members - including freedom of association and protection from discrimination or interference - is fully guaranteed in law and in practice;
- Economic and partnership initiatives, including in energy, transport, and digital transformation, deliver quality jobs, fair wages, and safe working conditions - including through strong social conditionalities for public spending;
- Reform processes, including those linked to the rule of law, transparency, and anti-corruption, are accompanied by strong social dialogue and the active involvement of trade unions;
- EU support to Armenia's reform and development agenda promotes equal economic, employment, and social opportunities for all, leaving no worker behind;

- Labour standards and social rights are fully integrated into EU-funded investments, trade relations, and connectivity projects.

We welcome the EU's continued role as a key partner for Armenia's reform agenda, its support for democratic institutions, and its contribution to economic development, including job creation and skills development.

We also underline the importance of the EU–Armenia visa liberalization dialogue as a step toward greater mobility, people-to-people contacts, and opportunities for workers, while ensuring fair and protected labour migration.

At a time of global challenges, including ongoing conflicts and economic uncertainty, we reaffirm that lasting peace, resilience, and prosperity cannot be achieved without social justice and strong labour protections.

Trade unions in Armenia and across Europe stand ready to contribute through strengthened cooperation, solidarity, and active engagement in shaping policies that affect workers' lives.

We stress the crucial role of trade unions and call for their full recognition and meaningful involvement in all decision-making processes.

We welcome the signing of the Tripartite Republican Collective Agreement in Armenia in January 2026 as a positive step.

However, we regret that Armenia still lacks a functioning, permanent, and institutionalized system of social dialogue and collective bargaining, in line with its obligations under ILO standards and CEPA.

Furthermore, we call for:

- Ensuring that economic development translates into quality employment, fair wages, safe working conditions, and social protection;
- Continued EU support for reforms that promote equal economic, employment, and social opportunities for all, contributing to a resilient and inclusive Armenian society.

Together, we call for a partnership that delivers not only economic growth, but also quality jobs, dignity, fairness, and opportunity for all workers in Armenia and across Europe.

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

EPSU-ի ուղերձը Եվրոպական գագաթնաժողովի կապակցությամբ

Մայիսի 5-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստան-Եվրամիություն գագաթնաժողովը, որն առաջին անգամ մայրաքաղաքում հյուրընկալեց ԵՄ-ի և անդամ պետությունների պատվիրակություններին։

Հայաստանի պետհիմնարկների / Jun 10

https://arhmiutyun.org/2026/05/11/epsu-address-for-eu-armenia-summit-in-yerevan-2026/



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԴԱՆԻԱՅԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան մայիսի 6-ին հյուրընկալեց Դանիայի արհմիությունների զարգացման գործակալության (DTDA) ներկայացուցիչներ՝ ծրագրերի պատասխանատու Յոհան Բյոգը (Johan Bøgh) և ծրագրերի խորհրդատու Յան Քյոլեր Նիլսենը (Jan Køhler Nielsen):

Հանդիպման ընթացքում քննարկվել են ՀԱՄԿ-ի և Դանիայի արհմիությունների զարգացման գործակալության միջև համագործակցության ընթացիկ ուղղություններն ու հետագա համագործակցության հնարավորությունները: Կողմերը կարևորել են միջազգային գործընկերության դերը արհմիությունների կարողությունների զարգացման, աշխատողների իրավունքների պաշտպանության և սոցիալական երկխոսության ամրապնդման գործում:

Քննարկվել են նաև համատեղ ծրագրերի իրականացման, փորձի փոխանակման, վերապատրաստումների և արհմիութենական կրթության զարգացմանն առնչվող հարցեր: Հատուկ անդրադարձ է կատարվել ժամանակակից աշխատաշուկայի մարտահրավերներին, թվայնացման ազդեցությանը և աշխատողների իրավունքների պաշտպանության նոր մեխանիզմների անհրաժեշտությանը:

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա նախագահը ներկայացրել է Հայաստանում արհմիությունների գործունեության հիմնական ուղղությունները, առկա խնդիրներն ու առաջնահերթությունները՝ ընդգծելով միջազգային համագործակցության կարևորությունը արհմիությունների զարգացման տեսանկյունից:

Հանդիպումն անցել է ջերմ և կառուցողական մթնոլորտում: Կողմերը վերահաստատել են համագործակցության շարունակականության կարևորությունը և պատրաստակամություն հայտնել զարգացնելու գործընկերային կապերը՝ ի նպաստ աշխատողների իրավունքների պաշտպանության և սոցիալական արդարության ամրապնդման:

facebook.com/reel/958030183874883/

ԿԱՅԱՑԱՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԸ

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանում Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի գրասենյակի համագործակցությամբ իրականացվել է հերթական արհմիութենական երիտասարդական ամառային դպրոցը:

Մայիսի **15-17**-ը երիտասարդ արհմիութենականները երեք հագեցած օրերի ընթացքում քննարկել են Հայաստանի աշխատաշուկայի առջև ծառացած հիմնական մարտահրավերները, կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող խնդիրները և Հայաստանում կայանալիք **COP17**-ի շրջանակում արհմիութենական տեսակետների ձևավորման կարևորությունը:

Ամառային դպրոցի օրակարգում ընդգրկվել էին նաև արհեստական բանականության հնարավորություններն ու դրանց ազդեցությունն աշխատանքի աշխարհի վրա, ինչպես նաև թունաքիմիկատների կիրառման հետևանքները՝ աշխատողների անվտանգության և հանրային առողջության տեսանկյունից:

Մասնակիցների համար ամառային դպրոցը դարձավ գիտելիքների ձեռքբերման, փորձի փոխանակման և արդիական թեմաների շուրջ արդյունավետ քննարկումների հարթակ՝ նպաստելով երիտասարդ արհմիութենականների կարողությունների զարգացմանն ու ակտիվ ներգրավվածությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ՝ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության Ո

Շնորհավո՛ր ձեր տոնը, թանգարանների սիրելի և թանկագին աշխատողներ: Այս դեպքում ձեզ վերաբերող թանկագին բառի մեջ ոչ մի չափազանցություն չկա, քանի որ դուք...

hamk.am

https://hamk.am/hayastani-mshakuyti-ashkhatokhneri-arhestaktsakan-kazmakerputyunneri-chyukhayin-hanrapetakan-miutyan-ukherdzy-hanrapetutyan-tangaranneri-ashkhatokhnerin-tangaranneri-mijazgayin-orva-kapaktsutyamb

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԻՄ-ԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԼԻՏՎԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Լիտվայի գործընկեր արհմիության պատվիրակությունն այցելեց Հայաստան

Հայաստանի պետհիմնարկների / Jun 2

https://arhmiutyun.org/2026/05/18/lithuania-public-and-budget-union-second-visit-2026/#

ԷԼԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆՆ ԸՆՏՐՎԵԼ Է ԱԼԳ ՔՀՖ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ

Մայիսի 25-ին կայացած Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի (ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ) պատվիրակների ժողովի ընթացքում Հայաստանի ազգային համակարգող ընտրվեց Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ Էլեն Մանասերյանը:

ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ-ը միավորում է քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ նպաստելով ժողովրդավարական զարգացմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը և Հայաստանի ու Եվրոպական միության միջև համագործակցության ամրապնդմանը:

Էլեն Մանասերյանի ընտրությունը կարևոր քայլ է քաղաքացիական հասարակության և արհմիութենական շարժման համագործակցության զարգացման ուղղությամբ: Նոր պաշտոնում նա կոորդինացնելու է պլատֆորմի գործունեությունը՝ նպաստելով անդամ կազմակերպությունների արդյունավետ համագործակցությանը և համատեղ նախաձեռնությունների իրականացմանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Մայիսի 25-ին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայում տեղի ունեցավ հանդիպում Աշխատանքի միջազգային կազմակերպության գենդերային հավասարության և խտրականության դեմ պայքարի հարցերով փորձագետ Օզգե Բերբերի և ԱՄԿ ազգային համակարգող Նունե Հովհաննիսյանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին տնային աշխատանք կատարողների աշխատանքային իրավունքների պաշտպանությանն առնչվող մի շարք կարևոր հարցեր՝ անդրադառնալով ոլորտում առկա մարտահրավերներին, սոցիալական պաշտպանության մեխանիզմներին և արժանապատիվ աշխատանքի ապահովման անհրաժեշտությանը:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 189 կոնվենցիային, որը վերաբերում է տնային աշխատանք կատարողների արժանապատիվ աշխատանքին: Քննարկվեց կոնվենցիայի արդիականությունը Հայաստանի համար, դրա հնարավոր ազդեցությունը աշխատանքային իրավունքների պաշտպանության, աշխատանքային պայմանների բարելավման և խտրականության կանխարգելման տեսանկյունից:

Հանդիպման ընթացքում փորձագետ Անի Հովհաննիսյանը ներկայացրեց նաև «Հայաստանում ոչ ֆորմալ և տնային աշխատողների արհմիության կազմակերպման փորձից քաղված դասեր» զեկույցը: Զեկույցում անդրադարձ կատարվեց ոչ ֆորմալ և տնային աշխատողների կազմակերպման փորձին, առկա դժվարություններին, աշխատողների ներգրավվածության մեխանիզմներին, ինչպես նաև արհմիությունների դերի կարևորությանը նրանց իրավունքների պաշտպանության գործում:

Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց նաև նորաստեղծ «Ինքդ» արհմիութենական կազմակերպության գործունեությանը և դրա նշանակությանը տնային աշխատանք կատարողների շահերի ներկայացման և պաշտպանության տեսանկյունից:

Կողմերը վերահաստատեցին համագործակցության շարունակականության կարևորությունը՝ ուղղված աշխատանքի ոլորտում հավասար հնարավորությունների խթանմանը, խտրականության դեմ պայքարին և արժանապատիվ աշխատանքի սկզբունքների ամրապնդմանը Հայաստանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԼՈԲԱԼ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄ

Բրյուսելում կայացած Կրթության միջազգային գլոբալ արհմիությունների ֆեդերացիայի գործադիր խորհրդի 72-րդ նիստի որոշմամբ Հայաստանի ԲՈՒՀ-երի արհմիությունն դարձել է կազմակերպության լիիրավ անդամ:

Այս կարևոր ձեռքբերումը նշանակալի քայլ է Հայաստանի ԲՈՒՀ-երի արհմիության միջազգային գործունեության ընդլայնման ճանապարհին և վերահաստատում է կազմակերպության ակտիվ ներգրավվածությունը բարձրագույն կրթության ոլորտի միջազգային համագործակցության գործընթացներում: Կրթության միջազգային գլոբալ արհմիությունների ֆեդերացիային անդամակցությունը նոր հնարավորություններ է ստեղծում միջազգային գործընկերների հետ փորձի և լավագույն փորձառությունների փոխանակման, կրթության ոլորտի աշխատողների սոցիալ-աշխատանքային իրավունքների պաշտպանության, ինչպես նաև համատեղ ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման համար:

Լինելով կրթության ոլորտի ամենախոշոր միջազգային արհմիութենական կառույցներից մեկը՝ Կրթության միջազգային գլոբալ արհմիությունների ֆեդերացիան միավորում է աշխարհի բազմաթիվ երկրների կրթության աշխատողների կազմակերպությունները՝ նպաստելով որակյալ կրթության, ակադեմիական ազատությունների և արժանապատիվ աշխատանքի սկզբունքների առաջմղմանը: Հայաստանի ԲՈՒՀ-երի արհմիության անդամակցությունն այս հեղինակավոր կազմակերպությանը հնարավորություն կտա ավելի արդյունավետ ներկայացնել Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի աշխատողների շահերը միջազգային հարթակներում և ակտիվ մասնակցություն ունենալ ոլորտի զարգացմանն ուղղված նախաձեռնություններին:

Աղբյուր՝
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid0y6iorifBMb3E9FENfLBv5eHRVkath9FeGk2vph9SP19M43tavXRPk3tHpuTHYnRyl&id=100054687193149

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԿՈԼԵԿՏԻՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՒՄ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԱՌԱՋԽԱՂԱՑՈՒՄԸ

Արհմիությունների դերի ամրապնդումը կոլեկտիվ բողոքարկման ընթացակարգում և աշխատանքի անվտանգության ու առ

2026 թվականի մայիսի 23-24-ը Եվրոպայի խորհրդի «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում անցկացվեց երկօրյա սեմինար...

hamk.am

Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա
Հասցե՝ Վազգեն Սարգսյան 26/3, Երևան, ՀՀ
Հեռ. ՝ +37410 583682
www.hamk.am
hamk@hamk.am